

քոյ, որ ուրեք այնպիսի ոք կարէ գտանիլ՝ որ ոչ յագիցի խորտկաւ իմն քաղցեբբ. զի եւ եռօրեայ շրջանաւ նօթեցեալքն ի լերին, գարէ հացիւ եւ ձկամբք շատացան. զի թէպէտ եւ ցանկայ բնութիւն յագիլ, այլ թէ որով յագիցի՝ ոչ խնդրէ. զի եւ այնինչ ակօրժականքն ի կերելեաց՝ կոկորդապատիրք են, եւ ընդէաբար ուշարարք հեշտութեան: Այլ արդ միթէ եւ սրբազանն Դաւիթ իցէ յայսմանէ զրկեալ, եւ ընդէր իսկ սովեալ, ոչ ապաքէն տեսութեանն Աստուծոյ. զի քաջ իսկ գիտէր թէ, թէեւ բնաւիւք ոք հեշտանալ կարասցէ եւ յագիլ, թարց տեսութեան Աստուծոյ՝ որպէս գքաղցեալ վարանի կարօտութեամբ ընդ Անառակին: Ըստ սմին յարացուցի եւ յօրացեալքն ներ հանգստութեան՝ խոստովանին զինքեանց անհանգիստ գոլ ըստ ումնմն երջանիկ վարդապետի, որ ասէ թէ, Տէր արարեր զմեզ վասն քեզ՝ եւ անհանգիստ է սիրտ մեր՝ մինչեւ յանգիցէ ի քեզ: Եւ սքանչելատեսիլ մարգարէն Մովսէս՝ յետ այնքանեաց ի վեր քան զեղականաց տեսութեանց նկատման՝ զերջանկութիւն կայացուցեալ ներ միայնում տեսութեան Աստուծոյ՝ փափաքէր յորդապէս. Յոյց ինձ, ասէ, զերեսս քո: Որպէս եւ Փիլիպպոս ասէր, Յոյց մեզ ղհայր քո: Որպէս թէ յետ այնքան երանաբուն կենաց կենցաղոյ՝ անտեսութեամբն Հօր՝ սաստկապէս տանջի: Ըստ որում եւ Սողոմոն, որ գրեթէ ամենայն հեշտալեօք պատարուն եւ անկարօտ կենցաղականօք, այլ ներ ազդեալ իմացականին տեսութեամբ թէ գեղեցիկք գոն, յորոց ինքն վրիպեալն է ի նոցին տեսութենէ, խանդաղատական ձայնիւ հրաւիրէր յըստփոփութիւն աներջանիկ կենացն, ասելով. Ե՛կ ընդ հովանեաւ վիմին առ նախապարիսպսն. ցոյց ինձ զգէմս քո, եւ լսելի արա զձայն քո՝ զի ձայն քո քաղցր է եւ դէմ քո՝ գեղեցիկ: Եւ արդ՝ զի այսուքիկ հաւաստաբար ճանաչեցին, եթէ յըզձաւոյն